ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ
«ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԾԻՔԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ

Հայաստան, 0025, Երևան, Ալեք Մանուկյան փող., 5 շենք,
Հեռ. (+374)10570830, (+374)10554057 էլ.հասցե hasarakakan.kartsiq@gmail.com

Հանրային առաջնային խնդիրների ընկալումներն ու հիմնավորումները. ԶԼՄ-ների դերը դրանց ձևավորման գործընթացում

Երևան 2017

Բովանդակություն

Ներածություն..... 3
Հետազոտության նպատակ և խնդիրներ..... 3
Մեթոդ և դեպքերի ընտրություն..... 4
Արդյունքների վերլուծություն..... 4
Եզրակացություն..... 16
Օգտագործված գրականություն..... 18

Ներածություն

Հաշվի առնելով Հայաստանի քաղաքական և հասարակական համակարգում տեղի ունեցող փոփոխությունները և ժողովրդավարության զարգացման գործընթացը՝ վերջին տարիներին տարատեսակ քանակական հետազոտություններ ներառել են հանրապետության հանրային խնդիրների վերաբերյալ ընկալումների ուսումնասիրություն:

Չնայած, որ ՀՀ քաղաքացիները ունեն որոշ տեսակետներ հանրապետության կարևորագույն խնդիրների վերաբերյալ (ինչպես ցույց է տվել Կովկասյան Բարոմետր 2015թ հետազոտությունը, հայ հասարակության ընկալմամբ ՀՀ կարևորագույն խնդիրներն են գործազրկությունը, աղքատությունը և կոռուպցիան[1]), հայտնի չէ, թե ինչպես և որքանով են այդ պատկերացումները հիմնավորված, և որոնք են այդ պատկերացումների ձևավորման գործոնները: Այս առումով, հանրային խնդիրների ընկալման սոցիալական համատեքստը հասկանալու համար կարևոր է քանակական տվյալների համալրումը որակական տեղեկատվությամբ, քանի որ հանրային խնդիրների ընկալումները կախված են ինչպես հասարակության զարգացման օբյեկտիվ դինամիկայից, այնպես էլ հասարակական տարբեր խմբերի և անհատների սուբյեկտիվ և արժեքային կողմնորոշումներից (Boyle, 2001):

Հաշվի առնելով, որ հասարակական կարծիքի վրա ազդեցություն ունեն ԶԼՄ-ները, որոնք լայն լսարանների գրավման միջոցով հնարավոր են դարձնում հանրային հարցերի վերաբերյալ կոլեկտիվ կողմնորոշումների ձևավորումը (Moy & Bosch, 2013)՝ այս հետազոտությունը ուղղված է եղել նաև այս հարցի շուրջ սուբյեկտիվ կարծիքների հավաքագրմանը:

Հետազոտության նպատակ և խնդիրներ

Այս հետազոտությունը նպատակաուղղված է եղել դուրս բերելու

- հարցվողների պատկերացումները ՀՀ առաջնային հանրային խնդիրների վերաբերյալ,

[1] «Կովկասյան Բարոմետր (ԿԲ) 2015» հետազոտության հիմնական արդյունքները տեղադրված են ՀՌԿԿ-Հայաստանի կայքէջում.
http://www.crrc.am/hosting/file/_static_content/barometer/2015/CRRC-Armenia_CB2015_Presentation.pdf

- նրանց դիրքորոշումները հանրային խնդիրների պատճառների, պատասխանատուների և լուծման ձևերի վերաբերյալ
- խնդիրների մասին պատկերացումների ձևավորման վրա հայկական ԶԼՄ-ների ազդեցությունը՝ հարցվողների տեսանկյունից:

Մեթոդ և դեպքերի ընտրություն

Հետազոտության խնդիրների վերհանման նպատակով կիրառվել է խորին հարցազրույցի մեթոդը, որը թույլ է տալիս ազատ զրույցի միջոցով դուրսբերել ուսումնասիրվող թեմայի շուրջ հարցվողի սուբյեկտիվ պատկերացումները, ընկալումներն ու հիմնավորումները, ինչպես նաև դրանց զգայական ֆոնը, հարցվողի զգայական գնահատականներն ու տրամադրվածությունը:

Քանի որ ՀՀ հանրային դիսկուրսը կենտրոնացված է երկրի սոցիալական կենտրոնում՝ Երևանում, որպես հարցվող ընտրվել են երևանաբնակ քաղաքացիներ, ինչպես նաև երևանամերձ գյուղի բնակիչներ: Իրականացվել է 12 խորին հարցազրույց, ապահովվել է հարցվողների մաքսիմալ տարաբնույթություն. ներառվել են տարբեր սեռի (6-ը՝ արական, 6-ը՝ իգական), տարբեր տարիքային խմբերի (6 տարիքային խումբ՝ 18-25, 26-35, 36-45, 46-55, 56-65, 66+, յուրաքանչյուրից մեկ կին և մեկ տղամարդ), և տարբեր կրթական մակարդակ (6-ը՝ բարձրագույն կրթություն ունեցող, 6-ը՝ բարձրագույն կրթություն չունեցող) ունեցող հարցվողներ: Հաշվի առնելով Ղարաբաղյան հարցի ակտուալությունը հանրային դիսկուրսում՝ հարցվողների շարքում ներառվել է նաև մեկ ԼՂՀ քաղաքացի:

Արդյունքների վերլուծություն

Հարցվողների ընկալմամբ Հայաստանի առաջնային կարևորության հանրային խնդիրների շարքում են գործազրկությունը, աղքատությունը, սոցիալական անարդարությունը, անվտանգության և բանակի հետ կապված խնդիրները, կոռուպցիան: Հարցվողներից ոմանք նշել են նաև քաղաքացիական գիտակցության և կոլեկտիվ սոցիալական պատասխանատվության հետ կապված խնդիրներ: Հետաքրքրական է, որ բարձրագույն կրթություն չունեցող հարցվողներն ավելի հակված են եղել «ժողովրդի

անունից» խոսելու՝ ներկայացնելու ժողովրդի խնդիրները՝ որպես սեփական խնդիրներ, հիմնավորելու ժողովրդի տրամադրվածությունն իրենց սեփական փորձով, մինչդեռ բարձրագույն կրթություն ունեցողները որոշակի «հեռավորությունից» են նայում հանրային խնդիներին, ավելի հակված են խոսելու այն մասին, որ ժողովուրդը չի ընկալում որոշ խնդիրների կարևորությունը, բավականաչափ գիտակից չէ:

Աղքատություն և գործազրկություն

Գործազրկության առումով շեշտվում է երիտասարդության՝ աշխատաշուկայում կայացվելու հարցը, ընդ որում հենց երիտասարդների առջև բացվող հնարավորությունների կարևորությունը շեշտում են ոչ միայն իրենք՝ երիտասարդները, այլև այլ տարիքային խմբերի ներկայացուցիչները: Խորհրդային սերնդի մարդիկ անհանգստություն են արտահայտում երիտասարդների հնարավորությունների վերաբերյալ՝ պայմանավորված առաջին հերթին աշխատանքի ինստիտուտի խորհրդային պրակտիկաներով. այս սերնդի հարցվողները մեծ մասամբ գտնում են, որ երիտասարդներին պետք է հնարավորություն տրվի անմիջապես ուսումից հետո անցնել աշխատանքի, ընդ որում, առաջին իսկ աշխատանքը պետք է լինի բարձր վարձատրվող: Կարիերայի հնարավորությունը, աշխատանքային փորձի ձեռքբերմանը զուգահեռ աշխատավարձի աճը, ըստ էության, չի դիտվում որպես հնարավոր տարբերակ:

«60-65 տարեկաններն աշխատում են, երիտասարդ ավարտած մարդիկ տեղ չունեն աշխատելու, եթե ունեն էլ, 70 հազար դրամով պիտի աշխատեն»

(Կին, տարիքային խումբ՝ 46-55, առանց բարձրագույն կրթության)

Խորհրդային պրակտիկաներով պայմանավորված այն պատկերացումը, որ բարձրագույն կրթությունն աշխատանքի ընդունվելու երաշխիք է, նպաստում է սոցիալական նեգատիվիզմի զարգացմանը. բախվելով կրթությունն ավարտելուց հետո աշխատանք փնտրելու և աշխատանքային փորձ հավաքելու անհրաժեշտությանը՝ երիտասարդներն ու իրենց ծնողները հիասթափություն են ապրում:

«Այսօր ես 21 տարեկան տղա եմ, չեմ աշխատում, տանը պարապ նստած եմ, պարզ է, պիտի մտածեմ մեկի վրա կեղտ թափելու մասին»

(Տղամարդ, տարիքային խումբ՝ 18-25, ուսանող)

Բարձրագույն կրթությունն, ըստ էության, դիտվում է ոչ թե որպես գիտելիքների ու հմտությունների ձեռքբերման միջոց, այլ որպես «ազնվական» կոչում, որը պետք է ապահովի հասարակական ավելի բարձր դիրք ու արտոնությունների շարք:

Հարցվողներից մեկը գտնում էր, որ երիտասարդության գործազրկությունը պայմանավորված է երկու գործոններով՝ բուհական համակարգ-աշխատաշուկա կապի խնդիրներով և լուրջ ներդրումների բացակայությամբ, ինչի արդյունքում երիտասարդները ստիպված լքում են Հայաստանը՝ փորձելով հաստատվել այլ երկրներում: Հարցվողներն առհասարակ հիմնականում հակված են արտագաղթը աղքատության և գործազրկության հետևանք համարելու:

«Խնդիրը ֆինանսական է, դա էլ գալիս է աշխատատեղերից: Դրա համար էլ երիտասարդությունը երկրից հեռանում է»

(Կին, տարիքային խումբ՝ 66+, առանց բարձրագույն կրթության)

Արտագաղթի ոչ տնտեսական պատճառներ հարցվողները հիմնականում չեն տեսնում: Հարցվողներից մեկը նշել է, որ իր դիտարկումներով իր շրջապատում արտագաղթողների մոտիվացիան գործազուրկների համար կապված է աշխատանք գտնելու հույսի հետ, իսկ զբաղվածների համար՝ ավելի լավ վարձատրվող աշխատանք գտնելու:

Կա կարծիք, որ մնացած հանրային հարցերը՝ անարդարությունը, կոռուպցիան, իրավահավասարությունը և այլն, չեն ընկալվում հանրության կողմից որպես առաջնային, քանի որ առաջին հերթին պետք է լուծվի «հացի» խնդիրը. այս առումով հանրային հարցերի շեշտը դրվում է հատկապես խոցելի՝ աղքատ, գործազուրկ բնակչության վրա, մինչդեռ այն խնդիրները, որոնց կարող է բախվել այդ թվում և տնտեսապես ապահովված անհատը, մղվում են երկրորդ պլան:

«Երբ գնում ես մարզեր, տեսնում ես, թե այնտեղ ինչ վիճակ է. մարդ պատրաստ է իր ձայնն էլ վաճառել, անարդարություն էլ անել, կաշառք էլ տալ, եթե հնարավորություն ունի, միայն թե կարողանա փող աշխատել, ապրելու հարցը լուծել»

(Տղամարդ, տարիքային խումբ՝ 66+, բարձրագույն կրթություն)

Ըստ էության, հարցվողների հասարակական ինքնաընկալմամբ Հայաստանն աղքատ երկիր է, որում ապրում է սոցիալ-տնտեսական լուրջ խնդիրների առաջ կանգնած ժողովուրդ: Ներկա իրավիճակը դիտվում է մի կողմից խորհրդային տարիների հետ համեմատության մեջ, մյուս կողմից՝ եվրոպական երկրների իդեալացված կերպարի:

Համեմատաբար մեծահասակ հարցվողների մեծամասնության մոտ արտահայտված է խորհրդային նոստալգիա. խորհրդային տարիների մասին խոսելիս այս հարցվողները հիմնականում կիրառում են զգայական բնորոշումներ. ***«կյանքը լավ էր, մենք ուրախ էինք», «ես մենակ լավն եմ տեսել այդ տարիներին»*** և այլն: Նկատվում է, որ խորհրդային պրակտիկաները դեռևս տեղ ունեն այս հարցվողների գիտակցության մեջ, աշխատաշուկայից և տնտեսությունից առհասարակ նրանք սպասում են այն, ինչ տեսել են խորհրդային տարիներին. գործարանների կառուցում, կրթական համակարգ-աշխատաշուկա անմիջական կապ, մեծ թվով պետական աշխատատեղերի առկայություն:

Ավելի երիտասարդ հարցվողները հակված են բացասաբար արտահայտվելու կոմունիստական կարգի և խորհրդային գաղափարախոսության վերաբերյալ, և գտնում են, որ խորհրդային մտածելակերպը արդի Հայաստանի մի շարք այլ հանրային խնդիրների հիմանական պատճառներից է: Սոցիալ-տնտեսական վիճակի առումով երիտասարդ հարցվողներն ավելի հակված են եղել Հայաստանը եվրոպական երկրների հետ համեմատելու. Եվրոպայի հավաքական կերպարը ձևավորվում է գաղափարախոսացված հանրային դիսկուրսի և ԶԼՄ-ների կողմից շրջանառվող տեղեկատվության հիման վրա:

Սոցիալական անարդարություն և կոռուպցիա

Հարցվողների մի մասը Հայաստանի հանրային խնդիրների շուրջ խոսելիս մատնանշել է սոցիալական անարդարության խնդիրը. ընդ որում, եթե որոշ հարցվողներ առանձնացրել են այն որպես ինքնուրույն հանրային հիմնախնդիր, ապա մյուսները դիտարկել են այս հարցն ավելի շուտ սոցիալ-տնտեսական ընդհանուր իրավիճակի համատեքստում՝ նշելով, որ սոցիալական անարդարությունը ինքնին բնակչության ցածր կենսամակարդակի հիմնական

պատճառներից է՝ պայմանավորված ղեկավարության ու պետական կառույցների ներկայացուցիչների բացասական անհատական որակներով: Հատկանշական է, որ այս խնդրի առանցքային հիմնավորումները կապվում են ոչ թե համակարգային բնութագրերի, սոցիալ-տնտեսական ու քաղաքական պայմանների, պատմական պատճառների, այլ առանձին անձանց կամ խմբերի անհատական որակների ու գործունեության հետ: Այս երևույթը հայտնի է որպես պերսոնալիզացիա, որին բնորոշ է համակարգային պարզեցում և զգայականություն (Lance Bennet, 2012):

Անարդարության խնդիրը մատնանշած հարցվողները գտնում են, որ այն բխում է պետական հիերարխիայի վերևում գտնվողների կողմից իրենց պաշտոնի/դիրքի շահագործումից: Հարցվողները դժգոհում են այդ մարդկանց տրվող արտոնություններից, օրենքը շրջանցելու և ամեն ինչ «գնելու» հնարավորություններից: Հատկանշական է, որ հավելյալ հարցերի բացակայության դեպքում, հարցվողներն այս թեմայով խոսել են շատ ընդհանրացված արտահայտություններով, կարծես ամեն ինչ առանց բացատրության էլ հասկանալի է: Այս դիսկուրսների լայն տարածվածությունը հասարակությունում բերում է նման զգացումի ձևավորմանը. «բոլորս գիտենք, ինչ թաքցնենք» և այլն:

Հարցվողներից մի քանիսի կարծիքով Հայաստանի բոլոր խնդիրների հիմքը ֆինանսական ռեսուրսների կուտակումն է մի խումբ մարդկանց ձեռքում. պատկերացումներն այդ մասին միֆական են, իսկ խնդիրների լուծման մեխանիզմների վերաբերյալ կարծիքները հիմնված են ուտոպիստական և պարզեցված գաղափարների վրա.

«Երկու տարում հնարավոր է Հայաստանը ծաղկող երկիր դարձնել… այդ ամենը՝ գողացված փողերը հետ բերվեն, այդ ժամանակ ամեն ինչ կլինի»:

(Տղամարդ, տարիքային խումբ՝ 18-25, ուսանող)

Համապատասխան այս մոտեցման՝ կոռուպցիան ևս դիտվում է որպես սոցիալական անարդարության ատրիբուտ, որը հիմք է առնում պետական քաղաքականությունից: Հարցվողների մեծ մասը խոսել է Հայաստանում կոռուպցիայի լայնամասշտաբության մասին: Այս պատկերացումները համապատասխանում են Հայաստանում կոռուպցիայի վերաբերյալ քանակական հետազոտության

տվյալներին. կոռուպցիայի ընկալման և իրական կոռուպցիոն գործողությունների միջև տարբերությունը Հայաստանում հսկայական է, հասարակության ընկալմամբ կոռուպցիան 3 անգամ ավելի շատ է, քան գործնականում (EBRD Life in Transition Survey, 2016, p. 29.): Բացի այդ, հարցվողների պատկերացմամբ կոռուպցիայի առկայությունը դանդաղեցնում է տնտեսական զարգացման գործընթացը, մինչդեռ միջազգային փորձում դեռևս բացահայտված չեն կապեր կոռուպցիայի մասշտաբների և տնտեսական զարգացման աստիճանի միջև:

Հարցվողների մի մասի կարծիքով կոռուպցիան հնարավոր է վերացնել պարզապես քաղաքական կամքի դրսևորմամբ, մյուսները գտնում են, որ կոռուպցիայի վերացումը կպահանջի տարիների ջանքեր: Այնուամենայնիվ, երկու կարծիքների կողմնակիցներն էլ ընդհանուր առմամբ համարում են, որ այս խնդրի լուծումն անհրաժեշտ է և պետք է իրագործվի քաղաքական ուժերի կամքով:

Բանակի հետ կապված հանրային խնդիրների ընկալումները

Հատկանշական է, որ Հայաստանում անցումային փուլի կարևորագույն բաղադրիչ դարձավ Արցախյան պատերազմն իր քաղաքական, տնտեսական ու սոցիալական հետևանքներով: Բավականին երկար ժամանակ՝ ընդհուպ մինչև վերջին էսկալացիան 2016թ. ապրիլին, բանակը շարունակում էր մնալ միակ պետական ինստիտուտը, որը որոշակի հասարակական վստահություն էր վայելում. վերջին շրջանում բանակի նկատմամբ վստահությունը նվազել է, և սկսեցին հայտնվել հասարակական նոր տրամադրվածություններ՝ կապված բանակի հանդեպ բացասական վերաբերմունքի ու հանրային դիսկուրսում այդ թեմայի լայն շրջանառման հետ:

Բանակի հետ կապված՝ հարցվողներն առանձնացրել են հիմնականում հետևյալ երկու խնդիրները.

- Անվտանգության և երիտասարդ տղամարդկանց կյանքին սպառնալիքի խնդիր,
- Կոռուպցիայի և բանակից ազատման մեխանիզմների խնդիր:

Առաջին խնդրի հիմքերն ակնհայտ են, և զարմանալի չէ, որ երիտասարդների կյանքի համար անհանգստությունը խիստ արտահայտված է հատկապես 2016թ. ապրիլյան դեպքերից հետո: Հատկանշականն այն է, որ բանակի ու սահմանին տիրող

իրավիճակի մասին խոսելիս հարցվողները որպես կանոն չեն կենտրոնանում այս խնդրի վրա, այն կարծես բնականորեն ներդրված է նրանց գիտակցության մեջ և կասկածների ենթակա չէ: Բարձրագույն կրթություն ունեցող հարցվողներից մեկը (մասնագիտությամբ քաղաքագետ) խոսել է հանրային դիսկուրսի վրա հասարակության «ռազմականության» ազդեցության մասին:

«Խնդրի առկայությունը թելադրում է, որ դու հանրային դաշտում ունենաս այդ ռազմահայրենասիրական կայֆերը, միլիտարիզացիայի նշանակալի աճ, ամեն իններորդ մարդը Հայաստանում կրում է զինվորական համազգեստ»:

(Տղամարդ, տարիքային խումբ՝ 26-35, բարձրագույն կրթություն)

Ինչ վերաբերում է բանակի հետ կապված երկրորդ խնդրին, հարցվողներից մեկը, դժգոհելով բանակից ազատման հետ կապված կոռուպցիոն մեխանիզմներից, ըստ էության, իր դժգոհությունն ուղղում էր ոչ այնքան ողջ համակարգին ու կոռուպցիայի հնարավորությանն առհասարակ, որքան այդ համակարգում սեփական անհաջող դիրքին՝ պայմանավորված ռեսուրսների սակավությամբ. նա անկեղծորեն ընդունում էր, որ հնարավորության դեպքում ինքն էլ կներգրավվեր կոռուպցիոն պրակտիկաների մեջ:

Սա թույլ է տալիս եզրակացնել, որ կոռուպցիոն պրակտիկաներից ու դրանից բխող անարդարություններից քաղաքացիների դժգոհությունը ոչ միշտ է պայմանավորված ընդհանուր համակարգի չընդունմամբ, և կարող է պայմանավորված լինել այդ համակարգում տվյալ անհատի ոչ շահեկան դիրքով: Հնարավոր է, որ նման մոտեցումն աշխատում է առհասարակ հիերարխիկ բնույթի հարաբերությունների բոլոր ձևերում, երբ սոցիալական սուբյեկտներին չի բավարարում իրենց դիրքը, սակայն այդ փաստի ժխտումը բերում է դժգոհության վերաձևակերպման՝ որպես դժգոհություն անարդարությունից:

Քաղաքացիական գիտակցության պակասը՝ որպես հանրային խնդիր

Բարձրագույն կրթություն ունեցող հարցվողների մեծ մասը որպես հանրային խնդիր է առանձնացրել քաղաքացիների անտարբերությունը երկրի քաղաքական ու տնտեսական վիճակի նկատմամբ:

«Մարդիկ մտածում են, որ եթե իրենք քաղաքական գործիչ չեն, ուրեմն դա իրենց չի վերաբերում»:

(Կին, տարիքային խումբ՝ 36-45, բարձրագույն կրթություն)

Նման հարցվողները մեծ մասամբ ընդգծում են, որ երկրի վիճակի համար սեփական պատասխանատվության ընկալման բացակայությունը կարևորագույն հանրային խնդիր է: Խոսքն այս պարագայում ավելի շատ վերաբերում է իրավագիտակցության և քաղաքացիական գիտակցության խնդիրներին, որոնց համար պատասխանատվությունը հարցվողները տեսնում են այդ թվում ղեկավարության գործունեության մեջ: Համաձայն այս խնդիրը տեսնող հարցվողների՝ քաղաքացիական գիտակցության բացակայությունը պայմանավորված է նման սովորության բացակայությամբ, և այդ սովորության ձեռքբերման միջոց կարող է լինել քաղաքացիական «ճիշտ» վարքի պարտադրանքն իշխանության և պետական կառույցների կողմից, վարքի կոնկրետ մոդելների խրախուսումը սոցիալականացման ինստիտուտների կողմից: Հարցվողները հիմնականում այս խնդրի լուծումը կապում են քաղաքական կամքի արտահայտման պահանջի հետ:

Այնուամենայնիվ, որոշ հարցվողներ (հատկապես բարձրագույն կրթություն չունե-ցողները) հասարակությանը չեն վերագրում պատասխանատվություն հանրային խնդիրների առաջացման ու լուծման համար:

«Սովորական աշխատավոր մարդիկ ոչ մի բանի համար պատասխանատու չեն»:

(Տղամարդ, տարիքային խումբ՝ 46-55, առանց բարձրագույն կրթության)

«Խեղճ հասարակությունն ինչ հնարավորություն ունի»:

(Կին, տարիքային խումբ՝ 66+, առանց բարձրագույն կրթության)

Հասարակությունն, ըստ էության, դիտվում է որպես փոփոխությունների պասիվ ընդունող: Չնայած որ հարցվողներից ոմանք շեշտում են վերջին տարիներին զարթնած ակտիվության մասին, այնուամենայնիվ, որպես «ակտիվ» քաղաքացիության հիմնական գործառույթ է դիտվում պահանջատիրությունը. պետք է պահանջել իշխանություններից, որպեսզի նրանք ի կատար ածեն պահանջածը: Իրական մասնակցային պրակտիկաները դեռևս զարգացած չեն, նույնիսկ այն հարցվողները, ովքեր խոսել են պետության զարգացման գործընթացում քաղաքացու

դերի մասին, հիմնականում ընդգծել են օրինապահության և հանրային տարածքների համար որոշակի մինիմալ պատասխանատվության կարևորությունը (հետևել երթևեկության կանոններին, պահպանել հասարակական վայրերի մաքրությունը և այլն), ինչպես նաև ընտրություններին մասնակցելու և սեփական ձայնը կարևորելու անհրաժեշտությունը՝ պայմանավորված վերոնշյալ պահանջատիրության կարևորմամբ: Այնուամենայնիվ, չեն մատնանշվել տեղական/համայնքային մակարդակի մասնակցային պրակտիկաները, հասարակական ոլորտում ներգրավվածությունը՝ որպես ժողովրդավարական հասարակության կառուցման գործոն:

Սոցիալական նեգատիվիզմ և ազգային թերարժեքություն

Որպես հանրային խնդիր հարցվողներից մի քանիսն առանձնացրել են նաև աճող անտարբերությունը շրջապատի նկատմամբ: Այս դիրքորոշումը հարցվողների շրջանում շատ լավ է արտացոլում տիրող սոցիալական նեգատիվիզմի միջավայրը. մի կողմից, հարցվողները, զգալով այդ միջվայրի բացասական ազդեցությունը, արտահայտվում են այնպիսի խնդիների մասին, ինչպիսին է փոխադարձ անտարբերությունը, մյուս կողմից, այդ դիրքորոշումն ինքնին որոշակի ազգային թերարժեքության ձև է ստանում. «ամեն ինչ վատ է, մենք վատն ենք, ժողովուրդը վատն է»:

Հարցվողների մեծամասնության մոտ, ընդհանուր առմամբ, նկատվում է ոչ միայն պետության, այլև ժողովդրի և ազգային մշակույթի արժեզրկման միտում. սեփական կարծիքում համոզված լինելով՝ հարցվողները մատնանշում են հասարակական կարծիքի «սխալությունը», երբեմն պիտակներ են տրվում ազգին. «հայ ազգը գողացող ազգ է», «հայ ազգը անկուշտ ազգ է», «մեր մեջ այդ «մառադյորությունը» շատ է նստած»: Ազգային այս թերարժեքությունը հիմք է առնում սոցիալական ընդհանուր նեգատիվիստական միջավայրից: Առկա է նաև ավանդական արժեքների որոշակի վանում. այս առումով հատկապես երիտասարդների շրջանում նկատվում է որոշակի «եվրոպամետության» դրսևորում, որն արտահայտվում է ոչ այնքան որպես եվրոպական արժեքների իրական իմացության վրա հիմնված դիրքորոշում, որքան որպես գաղափարախոսական շրջանակ, որում «եվրոպականը» դրական պիտակ է,

իսկ «հայկականը»՝ բացասական: Սա ևս ազգային թերարժեքության արտահայտում է, որը կապված է հասարակարգի փոփոխությունից բխող սոցիալական փոխակերպումների հետ. հասարակության մեջ ստեղծվել է մի կողմից նոստալգիկ տրամադրվածություն, մյուս կողմից՝ կողմնորոշում դեպի գլոբալացում և հեռացում ազգայինից:

Հասարակական այնպիսի փոփոխությունները, ինչպիսին էր կոմունիստական կարգի փլուզումն ու հետխորհրդային տարածքում նորանկախ պետությունների՝ այդ թվում անկախ Հայաստանի հռչակումը, միշտ ուղեկցվում են ոչ միայն տնտեսական, այլև սոցիալական ծանր ցնցումներով: Ինչպես նշում է Պ. Շտոմպկան «Նման ժամանակաշրջաններում հասարակության բոլոր անդամները – քաղաքական գործիչները, առաջնորդներն ու հասարակ մարդիկ հավասարապես ունենում են մոլորվածության և ապագայի հանդեպ անվստահության զգացում: Լայն տարածում է ստանում անոմիան՝ Դյուրկհեյմյան իմաստով: Նման անհանգստությունները հատկապես սուր են, քանի որ հաջորդում են «պաշտոնական համոզվածությանը»՝ լուսավոր ապագայի, համընդհանուր երջանկության և ազատության վառ հույսերով լցված: Նման բարձր սպասելիքների անհամապատասխանությունը աղետալի իրականությանը հատկապես բարդ ու ցավալի է ընկալվում» (Штомпка, 1996):

Համեմատություն այլ երկրների հետ

Այլ երկրների հետ Հայաստանի ներկա իրավիճակի համեմատությունը հանրային խնդիրների բնույթի և դրանց լուծման մեխանիզմների տեսանկյունից տարվում է հիմնականում երեք ուղղությամբ. հարցվողները համեմատել են Հայաստանը Ռուսաստանի՝ որպես քաղաքական դիսկուրսում շրջանառվող և արտագաղթի օջախ հանդիսացող երկրի, Վրաստանի՝ որպես Հայաստանին նման իրավիճակում գտնվող հարևան երկրի և Եվրոպայի՝ որպես բարեկեցության հավաքական կերպարի հետ:

Ռուսաստանի մասին պատկերացումները պայմանավորված են մի կողմից խորհրդային տարիներից մնացած հիշողությունների իդեալացմամբ ու նոստալգիկ տրամադրություններով, մյուս կողմից՝ սեփական միգրացիոն փորձով, ինչպես նաև արդի քաղաքական դիսկուրսով, որը լայնորեն շրջանառվում է ինչպես ԶԼՄ-ներով, այնպես էլ բանավոր զրույցներում բարեկամների, հարևանների և ընկերների

շրջապատում: Այս առումով հարցվողների ընկալումները տարբերվում են, խորհրդային սերնդի հարցվողներից ոմանք հակված են Ռուսաստանը դրական լույսի ներքո պատկերացնելու և ներկայացնելու, նրանց մոտ ձևավորված է պատկերացում ավելի բարձր կենսամակարդակի մասին, որը, ընդ որում, կարող է նույնիսկ հակասել սեփական փորձին. հարցվողներից մեկը նշում էր, որ երկար տարիներ բնակվել է Ռուսաստանում և տեսել է, որ «մարդիկ լավ են ապրում», միաժամանակ ինքը՝ հարցվողը, ստիպված է եղել Ռուսաստանից հեռանալ և վերադառնալ Հայաստան՝ չկարողանալով այնտեղ հաստատվել այդ թվում տնտեսական պատճառներով: Ռուսաստանի մասին քաղաքական պատկերացումները ևս ենթարկվում են պերսոնալիզացիայի. «Այնտեղ ավելի լավ է, քանի որ ղեկավարները հոգում են ժողովրդի մասին»:

Ավելի երիտասարդ հարցվողները հակված չեն Հայաստանը Ռուսաստանի հետ համեմատելու, չեն համարում, որ Ռուսաստանը լավ օրինակ է հանրային խնդիրների լուծման մեխանիզմների տեսանկյունից: Երիտասարդների շրջանում միտում կա վանելու Ռուսաստանի կերպարը և շեշտը եվրոպական փորձի վրա դնելու: Բացի առհասարակ եվրոպական երկրներից, որոնք ներկայացվում են որպես բարեկեցության և ժողովրդավարության տարածություն, օրինակ է բերվում Վրաստանը՝ որպես ավելի արևմտյան ու զարգացած երկիր: Վրաստանի նման ընկալումը պայմանավորված է տարածաշրջանում ստեղծված արևմտամետ իմիջով, Վրաստանն էլ, իր հերթին, նման քարոզչություն է վարում: Հատկանշական է, որ Վրաստանում հանրային խնդիրների լուծման հաջող օրինակների մասին խոսելիս հարցվողները շեշտում են հատկապես Սաակաշվիլիի նախագահության շրջանը, որն էլ առանձնանում էր յուրահատուկ արևմտամետ քարոզչության ուժեղացմամբ:

ԶԼՄ-ների դերն ըստ հարցվողների

Խոսելով ԶԼՄ-ների դերի վերաբերյալ հարցվողների ընկալումների մասին՝ հարկ է նշել, որ այս հարցում գրեթե բոլոր հարցվողների կարծիքը կապված է եղել մի կողմից ԶԼՄ-ների քաղաքական կախյալության, կողմնակալության հիմնահարցի և դրանից բխող անվստահության, մյուս կողմից՝ հարցվողների տեսանկյունից հաղորդացանցում անհրաժեշտ թեմատիկաների սակավության հետ: Հարցվողների շրջանում

եղել են նաև լրագրողներ, ովքեր դժգոհել են ինչպես ԶԼՄ-ների անկախության, այն-պես էլ ֆինանսավորման և այդ ոլորտում ռեսուրսների սակավության խնդրից:

Հարցվողների մեծամասնությունը կարծում էր, որ ԶԼՄ-ները պետք է իրազեկեն հանրությանը երկրի խնդիրների վերաբերյալ, ոմանք նաև գտնում էին, որ ԶԼՄ-ները կարևոր դեր ունեն քաղաքացիական գիտակցության ձևավորման հարցում: Ինչ վերա-բերում է հանրային խնդիրների լուսաբանմանը, հարցվողների մի մասը համարում էր, որ վերջին տարիներին քաղաքական ցենզուրան նվազել է և առհասարակ խոսքի ազատության հետ Հայաստանում խնդիր չկա, և այդ պատճառով հայկական ԶԼՄ-ներին հաջողվում է պատշաճ մակարդակի վրա պահել քաղաքացիների իրազեկման գործընթացը: Հարցվողների մյուս մասը կասկածամտություն է արտահայտել տրա-մադրվող տեղեկատվության վերաբերյալ՝ պնդելով, որ «ասում են այն, ինչ իրենց ձեռք է տալիս»: Միաժամանակ, նույնիսկ այն հարցվողները, ովքեր պնդում են, որ չեն վստահում ԶԼՄ-ներին, այնուամենայնիվ, կիրառում են դրանք որպես տեղեկատվության ստացման հիմնական միջոց:

ԶԼՄ-ների՝ որպես քաղաքացուն դաստիարակող ինստիտուտի մասին կարծիք հայտնած հարցվողները գտնում էին, որ անհրաժեշտ է տեղեկատվական ու քաղաքա-ցիական գիտակցություն խթանող հաղորդումների և ծրագրերի քանակի մեծացում:

«Պետք չէ դաստիարակել օրենքի գողեր, պետք է ցույց տալ, որ կան հաջողակ մարդիկ, ովքեր մի բանի հասնում են, քանի որ մեր կյանքում նման օրինակները քիչ են»:

(տղամարդ, տարիքային խումբ՝36-45, բարձրագույն կրթություն)

«Ես չեմ տեսել ոչ մի նորմալ կրթական ծրագիր որևէ մի ալիքով, եթե կա, երևի այնքան աննշան է, որ ես չեմ նկատել»:

(Տղամարդ, տարիքային խումբ՝66+, բարձրագույն կրթություն)

Կարծիքներն այն հարցի շուրջ, թե ում նախաձեռնությամբ է պետք իրականացնել դա, տարբերվում են. հարցվողներից ոմանք կարծում են, որ նման ծրագրերը պետք է պետական աջակցություն ունենան, մյուսներն ասում են, որ պատասխանատվությունն անկախ լրագրողների և հասարակ քաղաքացիների ուսերին է:

Եզրակացություն

Հետազոտության արդյունքների վերլուծությունը թույլ է տալիս կատարել մի շարք եզրահանգումներ՝ կապված Հայաստանի հանրային խնդիրների վերաբերյալ հարցվողների ընկալումների հետ.

- Ընդհանուր առմամբ առկա է նեգատիվիստական ինքնաընկալում. հարցվողները բնորոշում են Հայաստանը որպես աղքատ ու բարձր գործազրկության մակարդակ ունեցող երկիր: Գործազրկությունն ու ցածր կենսամակարդակն առհասարակ դիտվում են որպես երկրի կարևորագույն խնդիրներ, որոնց հետ կապված են հանրային այլ խնդիրները:
- Հայաստանի ներկա իրավիճակը դիտվում է ենթադրական այլ իրավիճակների հետ համեմատության մեջ: Համեմատությունը տարվում է հիմնականում երկու ուղղությամբ. ներկա Հայաստանը համեմատվում է մի կողմից Խորհրդային Հայաստանի, իսկ ավելի ճիշտ Խորհրդային Հայաստանի որոշակի երևակայական կերպարի հետ, իսկ մյուս կողմից Եվրոպայի հավաքական կերպարի հետ:
- Առկա է քաղաքական պերսոնալիզացիա. առանձին իրադարձություններ ու խնդիրներ կապվում են կոնկրետ մարդկանց/խմբերի գործունեության և անհատական որակների հետ. խնդիրների պատճառները կապվում են ոչ այնքան սոցիալ-տնտեսական ու քաղաքական ընդհանուր պայմանների, որքան առանձին անհատների կամքի հետ:
- Ընդհանուր նեգատիվիստական միջավայրի ֆոնին ստեղծվում է ազգային թերարժեքության մթնոլորտ. հարցվողներից շատերը՝ հատկապես բարձրագույն կրթություն ունեցողները, բացասաբար են արտահայտվում Հայաստանի ժողովրդի, հայ ազգի, մշակույթի և ավանդույթների մասին:
- Սոցիալական անարդարության և կոռուպցիայի խնդիրները հիմնավորվում են ազգային թերարժեքություն և քաղաքական պերսոնալիզացիա արտահայտող դիրքորոշումներով:
- Հանրային խնդիրների լուծման մեխանիզմների մասին հարցվողներից շատերի պատկերացումները պարզեցված են, պատասխանատվությունը ստանձնվում է

միայն ղեկավարությանը. հասարակությունն, ըստ հարցվողների մի մասի, խնդիրների լուծման գործընթացում դեր ու անելիք չունի:

- Բարձրագույն կրթություն ունեցող հարցվողներն առանձնացնում են քաղաքացիական գիտակցության թուլությունը՝ որպես հանրային խնդիր. քաղաքացիական վարքը հիմնականում կապվում է օրինապահության, անհատական սոցիալական պատասխանատվության և պահանջատիրության հետ:
- Որպես առանձին նշանակալի խնդիր է առանձնացվում անվտանգության հարցը, որի հետ կապված քննադատության է ենթարկվում բանակի ինստիտուտը. այդ քննադատությունը տեղավորվում է հանրային խնդիրների ընկալման ընդհանուր համատեքստի մեջ, մասնավորապես շեշտվում է բանակում կոռուպցիայի առկայության խնդիրը:
- ԶԼՄ-ները հարցվողների համար տեղեկատվության ստացման կարևորագույն միջոցներից են, սակայն առկա է անվստահություն այդ ինստիտուտի նկատմամբ՝ պայմանավորված ԶԼՄ-ների կախյալության մասին պատկերացումներով և պետական ու հասարակական կառույցների ցածր լեգիտիմությամբ:

Օգտագործված գրականություն

Boyle, P. (Fall 2001). Public Problems, Values, and Choices. *Popular Government*, 18-23.

EBRD Life in Transition Survey, (2016).

Lance Bennet, W. (2012). The Personalization of Politics: Political Identity, Social Media, and Changing Patterns of Participation. *The ANNALS of the American Academy of Political and Social Science*, 20-39.

Moy, P., & Bosch, B. (2013). *Theories of public opinion.* University of Washington.

Штомпка, П. (1996). *Социология социальных изменений.* М: Аспект Пресс.